

ՀԱՆՐԱՔԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական

ԽՄԲԱԳԻՐ — ՏԵՕՐԷՆ

ԲԻԻԶԱՆԴ Մ. ՊՕԶԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Ապրիլ 4

Թիւ 89 — ԺԶ

هزارايداق غزوةسى

HANRAKIDAGUE

Journal Arménien Encyclopédique



ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Տարեկան Պոլսոյ համար	50 Դր.
Գաւառաց համար	60 ,
Արասահման	15 Ֆր.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Վերջին շաբաթը
Մոռցուած
Տես' եւ գործ. Մանկավարժութիւն
Իսկային հասած (Վիպակ)
Զայն մը Վեցեփեկեկ
Կարմիր ծովը (Ճամբու ճօթեր)
Մօրուն

Թ. Լ.
Թեմիտիկ
Մ.
Ս. ԲԱԲԵԼԵԱՆ
Հ. Ա. ՂԱԶԻԿԵԱՆ
Գ.
Մ. Ա. ԹՈՒՐԵԱՆ

40 փաթա 40

ՀԱՆՐԱՔԻՏԱԿ կը ծախուի. 1. Գաւառացի, Արմեն ԷՖ. Զպուգնեանի Դեղարանը. — 2. Սա-
մաթիա, Կայարանին մօտ, ծխավառ Յարութիւն Աղա Էթերհանեանի խանութը. — 3. Կա-
մուրջի գլուխը, ջրավառ. Նեան աղա Օգունեանի փոխ (ճախկին ջրավառ Պօղոս ա-
ղայի խանութը). — 4. Զրավառ Սեփան աղայի խանութը. — 5. Մարգարեան, Պալեց,
Աւենեան եւ Զարգարեան ցրատուններ. — 6. Բոլոր լրագրավառներուն փոխ:

Գաւառներէ ո՛վ որ կը փափաքի ՀԱՆՐԱՔԻՏԱԿի գործակալութիւնն ստանձնել, կրնայ
ուղղակի Տնօրէնութեան դիմել:

ԿՈՆՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ն. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Էսկի Զապթիե հասցեսի Թիւ 61

1900

ԿԱՐԵԽՈՐ

Անոնք որ կը փափաքին նպաստաւոր
եւ շահաւէտ պայմաններով հողագոր-
ծութիւն ընել պէտք է փութան իրենց
ամեն տեսակ մշակութեանց մէջ ար-
հեստական աղբերու կամ հանքային
պարարտեցուցիչներու գործածութիւ-
նը ի կիր առնուլ որ կենդանական աղ-
բէն աւելի խնայողական ըլլալով հան-
դերձ աւելի արդիւնաբեր են :

Առանց պարարտեցուցիչներու մշա-
կութիւն մը կը նմանի առանց իւղի
կանթեղի մը :

Հնդհանուր մթերանոց

Խ. ՆԱՇԻՏ

Քիւլիւք Պարնաթան խան Կ. Պոլիս .
Ուր ձրի կը տրուին ամէն ծանո-
թութիւնք և տեղեկութիւնք :

ՆԻՈՒ ՀՈՄ

ԱՄԵՐԻԿԵԱՆ ՄԻՍԿ ԿԱՐԻ ՄԵՔԵՆԱՆ

Ուշագրութիւն գործարանի մարմանին



Որ կը մեցի բոլոր կարի մե-
քնաներուն հետ

Իր պարզութեամբ

Տոկունութեամբ

Արագութեամբ

Թեթեւութեամբ

Աժանութեամբ

Թուրքիոյ միակ ներկայացուցիչ

ՅՈՎՀ. Կ. ՄԻԱՆԵԱՆ

Կեդրոնացեղի. — Սիրքէճի , Քէօքքիւլի
խան , Թիւ 3 :

Մասնաճիւղ. — Ղալաթիա , Պէօլիւք Միլ-
լէթ խան , Թիւ 33 :

Գնողներու համար վճարման ամէ
սակ դիւրութիւններ :

ԱՌԵԻՐԱԿԱՆ ՄԵԾ ՏՈՒՆ ԹԵՅԻ



Կ. ԵՆՎՐՈՒԵԱՆ

Վ. ԻՍԱԳՈՒԼԵԱՆ

ՄԵԾԱՔԱՆՈՎ ձՈՒ ՄԹԵՐԲ

գերընտիր եւ ամէն ճաշակի յարմար

Որոշ եւ չափաւոր գին

Պահել գաբու , ճէլալ պէյ խանի տակ

Թէ՛ Պոլսոյ և թէ՛ դաւառի մեր պատ-
ուարժան ընթերցողներուն կը յանձնարա-
րենք սոյն վստահելի վաճառատունն , որ
երկար տարիներէ ի վեր պատուաւոր դիրք
մը գրաւած է , և ամէն տարի չի զլանար իր
թէյի նուէրը՝ ի նպաստ կարօտելոց :

Վստահաբար դիմեցէ՛ք և պիտի չզրդ-
ջաք : — Վաճառատան մարգային ուշ դրէ՛ք :

ՀԱՁԱՐ ԵՒ ՄԷԿ ԾԱՂԻԿ

ՀՆՏԱՎԱՋԱՌԱՆՈՑ

Կ. Պոլիս , Զօրապետի խանի դէմ Քիւլիւք
Պարնաթան խան Թիւ 10

Ձեր հաճոյքի համար ընելիք մշա-
կութեանց մէջ եթէ յուսախաբ և վրայ
տալ չէք ուզեր , ձեր դրամի ու աշխա-
տութիւնը , դիմեցէ՛ք վերոյիշեալ հետա-
վաճառանոցը ուր կը ծախուին երկրի
կլիմային յարմար ճշմարտապէս գե-
ղեցիկ ծաղիկներու եւ համեղ ու ար-
դիւնաշատ բանջարեղէններու հուն-
տեր , որոնց խսկութիւնն ու թար-
մութիւնն երաշխաւորեալ է :

Խիստ դիւրամացելի գիներ

Սոյն վաճառատան մէջ կը ծախուին
նաեւ ամէն տեսակ մշակութեանց հա-
մար մասնաւոր գուտ քիմիական աղբեր :

ԿԱՐԵԽՈՐ ԱԶԻ

Հանրագիտակի Տնօրէնութիւնը կրնայ
հայթայթել բոլոր վարժարաններու պէտք
ունեցած դասագիրքերը , եղած յանձնարա-
րութեանց ճիշդ համաձայն : Ամէնէն մեծ
գեղջը կուտայ , առանց ո եւ է շահու ալն-
կալութեան : Փորձեցէ՛ք եւ պիտի տեսնէք .
- Միշտ կանխիկ :

ՀԱՆՐԱԳԻՏԱԿ

ԼՐԱԳԻՐ

Ազգային, Գրական եւ Քաղաքական



ԼՐԱԳԻՐ - ՏՆՕՐԷՆ

ԻԻԷՁԱՆԴ Մ. ՊՕՁԱՃԵԱՆ

Գ. Շրջան

1900 Ապրիլ 1

Թիւ 89 — ԺԶ

ՎԵՐՋԻՆ ԶԱՐԱԹԸ

Ժամու սեզոնն էր սկսողը՝ քանի մը եօթնեակ առաջ, երբ մարեցան յիմարութիւնները Բարեկենդանին ու խրախճանքը անուշ յանցաւորի մը պէս ակամայ վտարուեցաւ տուներէն։ Ժամու սէզոնը, բացատրութիւնը անպատշաճ, բայց ճիշտ, այսինքն ժամկոչներուն փութկոտութեան չըջանը՝ բազմոց, աթոռ կրելու գեղեցիկ սեռին՝ որ փախցունք մը չէր տուած եկեղեցի գալու ամէն Արեւադալի, պարզուկ արդուզարդին տակ հազիւ պարտըկած նազանքը եւ ի՛՞զձը՝ հանգիստը չաւրելու հոն։ Ժամուն սէզոնը, այսինքն էրիկ մարդոց մէկ երկու ժամ ուշ գործի իջնելու եղանակը, իր ժամը ձգած քանի մը տասնոցին հետ ձգելու նաեւ քանի մը նայուածք ճերմակ վալսնայիկներու եւ պօռոտ շրջազգեստներու վրայ։

* *

Իրաւցնէ ճանչցաւ այս երկսեռ ամ-

բոխը որ հոտ վազած էր խուռներամ ճանչցաւ, կ'ըսեմ, հոգիին ցունցը՝ աղօթքի դաշն մեղեդիներուն մէջ, կըրցաւ ձգտիլ երեւակայութիւնին դէպի այն միսթիք բարձունքը սրբազան ուր Գերագոյնէակ մը անուրջներու կապոյտը կը խմցունէ։

Վարանումի հակոտնեայ թոթուրտուք մը պիտի առնէր այս հարցումներուն վրայ սա՛ բարեպաշտ ծերուկը՝ որ իր կարգին գտնուած էր հոն եւ յանկամա նշմարած ցամաքութիւնը կրօնքով նիհար այդ հոգիներուն, իրենց մէն մի շարժումներէն։

Շտրականը, որուն պերճիմաստ առդերուն չունչ, հոգի՛ կուտային ձայնալի դպիրներ, թերեւս վերացուց պահ մը զիրենք, ինչպէս բլբուլը քեզ պիտի վերացնէր գեղգեղած առտեն, նոյն իսկ երբ ամէնէն տափակ իրականութեամբ քայկատուելու վրայ՝ ըլլար քու միտքը։ Բայց ամէն մէկ հատակոտորի երգուածքէն յետոյ, երբ կզերին միանձն ընթերցումը կ'սկսէր՝ ձանձրոյթը կուգար միտքերը ցրուելու, որով հոգիին վայելքը կը կասէր, տեղի տալով ուրիշ

խոր վայելքին :

Վայլում չունեցող բան, տգեղ բան, բայց իրականութիւն :

* * *

Վերջին շաբաթը կայ հիմայ, Աւագ Շաբաթը, ապաշխարութեան, խոստովանանքի, սուրբ գրքերու քաղուածքի շաբաթը՝ գիշերը տունը, ցորեկը վերնատունը : Քահանան փութկոտ կ'ըլլայ հիմայ ծուխէ ծուխ վազվզելու, մեղքերու թողութեան աւագ պաշտօնին մէջ՝ միտքը սրշափ տարուելով այն ծանրկէկ ճերմակ լումաներուն զոր Զատկին օրը թուի՝ նկ պիտի իյնան սքեմէն ներս ու պիտի կաղացեն քալուածքը :


Ամէն թաղէ, ամէն արուարձանէ թաղական խորհուրդի անդամ մը Տպարան եկած է հիմայ՝ իւղագինի, ժամուցի եւ աղքատիկ աղոց զատկուան լաթի պաշտօնական Շրջաբերականները ապել տալու եւ ցրուելու ժամ առաջ : Պատրիարքարանին հետ լման շաբաթ մը դպրոցները կը փակեն դռներնին : Կիներուն ձեռքը թաւշապատ աղօթագիրք մը եւ խեցիէ գրամապսնակ մը կ'ըլլայ անպատճառ, աղօթագիրքը գոց ըլլուած կտորներէն եւ դրամապսնակը տասնոցներէն անիմաստաբար պարպուելու : Պիտի գան ասոնք ժամանակին բռնել իրենց տեղը գաւիթին ու վերնատունին մէջ :

Այս շաբաթուան, կամ աղէկը, տարւոյն ամէնէն մեծ օրը, Մեծ Հինգշաբթին է, կեանքին մէջ բնաւ եկեղեցիէն ներս ոտք չնետողը անպատճառ կ'երթայ, կ'ըսեն : Շարականներու եւ աղօթքներու մխտումի օրն է : Առաւօտեան «Վերաձգող»ը եղանակաւորման արհեստին գլուխ գործոցը կը համարուի : Յորեկուան Պատարագը, որուն մէջ Յիսուս կը կատարէ Ս. Հաղորդութեան

խորհուրդը՝ կը պարունակէ «Զերգս Հոգեւորս»ը, այն աղօթով, հաւատքով թուցունող սրբասացութիւնը՝ որ կըրնամ ըսել թէ մեր ամէնէն սկսպտիկին անդամ՝ իլուր ատոր՝ անպատճառ իր ներսէն հաւատքի, զղումի ձայն մը կուգայ ականջին : Եւ Յիսուս խորանին ոսկի սմբուլներուն մէջ, ճերմակ սփռոցներուն վրայ այսպէս պիտի վերջին Հացը ուտէ նորէն քչոցներուն զուարթ ծիծաղներովը եւ ջահերուն բոց նայուածքին տակ : Խոնարհութիւններուն ամէնէն ցնցող օրինակը պիտի տայ յետոյ, եւ երթայ պիտի այպանուիլ արժեմ չարժեմին լուտանքովը, մինչեւ որ Գաւթեւը կանգնուի Գողգոթայի բարձունքին, մարդէ յինուած ծառի մը յաւաքին ու խոհուն երեւոյթովը :

* * *

Այս աւագ օրերու սահումէն վերջ, եկեղեցին պիտի գոցէ գրեթէ իր դռները, կանթեղները պիտի սկսին իրենց լուռ պլպլանքը նորէն սուրբերուն առջին, ու նորէն նախկին ամենաւուրժանի մը հոգիի բազմութիւնը պիտի գայ ծունկ չոքիլ, առտուն «Զարթիք փառք իմ»ին եւ իրիկունը «Լոյս զուարթ»ին, մինչ ա՛յ ուշ ուշ ճօճող բուրվառին խունկը մարդերէ թափուր պարապին մէջ պատուքելով պիտի վեր ելլայ՝ Գերագոյն Էակին պատմելու հաւատքէ սնանկութիւնը այն հոգիներուն որոնք տօն օրերու միայն վաղած էին Աստուծոյ Տունը, հաւատացեալ երեւնալու ջնարակը վրանին : Թ. Լ.



Մ Ո Ռ Ց Ո Ւ Ա Ր



նշին, գտնալու յոգնութիւնը գրեթէ չարժող թուղթի մը համար վայնի վրան կուգար գրադարանիս: Ամէն մէկը կը բանայի իր երկուք ծալուածքէն, աչքի կարճ կեդրոնացում մը ներսը՝ որուն կը յաջորդէր թուղթին տփզոհ անկումը մատներէս:

Պրպտումս կասեցաւ յանկարծ: Ո՞վ չէ տեսած նոպարավաճառի դեղին կոշտ թուղթը որուն մէջ իւր կը դրուի կամ ապուխտ: Բացի ու ճանչցայ անոր մէջ իմ երբեմնի յունարէն գիրս: Բայց ի՞նչ դործ ունէր ինք, երկու ամի մեծութեամբ ատ թուղթը՝ նամակներու այս թոհուրոհին մէջ: Յիշողութիւնս ապերախտ գտնուեցաւ ինծի դէմ, մինչև որ բարձրաձայն չը կարդացի զայն, մինչ անդին, հոռութեան ջուրի պէս գիտցող մամաս վար դրած գուլպայի հիւսքը՝ ակնոցին տակէն գիւ կը գիտէր դէմքը քմծիծաղ, ու,

— Սիրահարական նամակ, հէ՞, կը ձայնէր, պարէ դադեկվար կըրէիր քիմ չհասկընայի...

Դգալի հարուածին պէս որ տաք կաթին վրայի դեղնուկ մարը կը ճղքէ. այս խօսքը բաւ եղած էր յիշողութեանս քօղը պատուելու և մոռովի տանելու գիւ վերջին վաքանսիս այն շարաթներուն զոր անցուցեր էի, հո՛ւ՛՛, տարիներ առաջ:

Դպրոցը նոր ձգեր էի: Յուլիսին սկիզբները գիւղագնացութեան պէս բան մը ըրինք ընտանիքով Չիֆթէ Հափուզ կրուելով: Վերամուտը նուկանքիս մտածումէն աչաւս՝ ո՛րչափ հեշտ կուգար ինծի սլաւապուրդի սյդ միսը զոր առջիս ունէի բնութեան սիրալի և անմարդաձայն այս խորը անցունելու:

Գացած ըլլալը մինակ չի բաւեր, Չիֆթէ Հափուզ պէտք է օրերով, գիշերով ալ մընալ՝ դգալու և վայելելու համար այն անուշ թուղթը որ կ'առթուի աւօտի խայտառներուն անդադրում գրաբիլոյսներէն, դոյգ աւագաններուն մէջ մէջի թափուելուն զըռարթ ձայնէն, հեռուի տափաստաններէն եկող դորտերու մեղանուագէն, ծառերէն որոնց գագաթին գիշերը աղամանդներ կը բանի ու ցորեկը գմրուխտ, յետոյ ծովէն զոր կը չքեղէ լուսինէն թափող արծաթ հեղեղը ծփանում:

Ու ես, գիշերնոցս հագած, կ'երթայի իյնալ փայտէ նստարանի մը վրայ, ժամերով մնալով հոն լքուն և վանելով քունը՝ որ մեղանչումի պէս կուգար անկողին տանիլ զիս:

Մեր բնակած գետնայարկ խուցին ճիշդ դէմը կ'իյնար միակ տունը, ծառերու մէջ խղդուած, որ Սալարաթիէնց ամարանոցն էր: Միմտիս բաներ էին մէջինները, տեսութիւն չունէինք հետերնին, բացի սպասուհիէն որ ամէն օր մեզի կուգար, ամառ ցորեկներու տաղտուկը մէկտեղ բաժնելու՝ յունարէն անվերջ շաղակրատութիւններով:

Իմ տարիքս գրեթէ, Թուլչացի աղջիկ մըն էր ան, խարտեաչին ամէնէն քնքուշ տիպարը: Իր դէմքին պէս կ'ախորժէի նաև իր չինականի անսեթեւեղ շարժումէն: Փնթի արդուդարթ մը ունէր, բայց յանցանքը ի՞նչն էր, երբ մատամային տուած չփակը չէր բուեր ծիծերուն կոհակը պարտեկելու և բէշը գետինը աւելու չափ երկայն ըլլար: Յանցանքը զոր երկուքնիս ալ ունէինք՝ իրարու լեզուէ չի հասկնալնիս էր միայն: Ո՛րչափ կը զղջայի՝ յունարէնին աեղ գի՛րը մինակ սուրված ըլլալուս, այն ձախլիկին պէս որ բժշկութիւնը չուսնած՝ դեղագիր մրտաւելու կ'ելլայ:

Հակառակ այս անպատեհութեան, համակրանքը չէ թէ յուշիկ, այլ մէկէն ի մէկ արթնցաւ մէջս: Մինչև ան տունն երեւակայոտ աղայ՝ կը մերկանայի հիմա վերացում:

ներէս, որովհետեւ դէմս իրականը կար, խնդումներս, լեզուանի, տաքարուն ու ճշմունտ այս աղջիկը՝ զիս իրաւցնէ խռովող և հոգիիս ամայութիւնը լեցունող անանուն, անառակ զգայութեամբ մը:

Աղախինի կտորի մը յարած ըլլալու նկատումս, ընդհակառակը, ոչինչ պակսեցող համակրութենէս: Վայելքի պէս բան մը կը զգայի իր Գալիօրի անունը տուած ատենս, այս անունը՝ ինծի համար մարքիզուհիի անունէ՛ մը աւելի քաղցրալուր:

Առտունները կարմիր կովէն իր ձեռքովը կթած կաթը տունիններէն գաղտուկ կը բերէր ինծի: Ասի օրէն աղբար սեպած զիս՝ կը գուշակէի թէ միտքին մէկ անկիւնէ՛ն իսկ չէ անցած որ յուզումներ տնկնամ ես իր մասին, ու ձեռքիս դողալը՝ կաթին գաւաթը առած պահուս՝ իրեն համար թագուն իմաստ մը չունէր, չունէ՛ր բնաւ: Ահա՛ սոսկալի կէտը որ ամէնէ՛ն աւելի մտահոգ, ամէնէ՛ն աւելի տխուր կ'ընէր զիս:

... Ճաշս նոր ըրած, եկեր նստեր էի ծառերուն տակ: Անլուսին գիշեր մըն էր, վրայիս ոտները աւելի՛ կը թանձրացնէին մութը, Ատեն աստե՛ն ականջիս կողային զանգակի ընդհատ ընդհատ հունչքեր, ու կ'երեւակայէի մարդերը, իզմէ՛ երջանիկ, որոնք բանջարաբարձ ձիերնուն վրայ հեծած կ'անցնէին այս պահուս՝ քունը դուրսնին՝ Այրբըզ Զէյմէի պողոտայէն...

Զինքը կը խորհէի նորէն: Ինքզինքս յանդիմանելը անօգուտ էր, միտքս միշտ իրեն կը ձգուէր, իրեն կը տարուէր՝ ծովին բնական մակընթացութեանը պէս. — ծառերուն տակէն իր ցորեկի վազքը, վաղքէն առթուած սքերլին մազերուն ծփանքը, լանջքին անգուսպ վէտվէտումը, ճպուռի զըւարթ խօսուըռուըրը, իր թրթռուն ձայնը որով «Մառկառօն» կը կանչէր, ամէ՛նքը...

Երգի պատառ մը սթափեցուց զիս յանկարծ. ծառաստանին խորէն կը փրթէր այս սլառաւոր, թիթեղ ամանի մը բաղնիսն խուլ աղմուկին հետ: Ի՛նքն էր, աւաղանէն ջուր լեցունել կուգար: Մինչեւ որ դոյրը եցուց ու ճամբայ ելաւ ան՝ հարիւր բաղ-

ճանք ծնան ու մեռան, մեռա՛ն ու ծնան ներսս:

— Գալիօրի, ըսի մարած ձայնով մը՝ առջեւս անցնելուն: Վախցաւ մէկէն ի մէկ, քանի մը քայլ ետ գնաց, բայց ճանչցաւ ձայնս և խնդուքով մը զինուած,

— Էսի՞ իսէ, տէ՛ն քիմիթհիքէս աքօմա, հարցուց ինծի, ու դոյլին մէջ թաթխելով միւս ձեռքը՝ ջուրի փունջ մը սրսկեց դէմքիս ու փախաւ գնաց:

... Օր մը իրեններուն նամակ պիտի խաւրէր, մամաս գրել գիտնալս իմացուց իրեն: Անմիջապէս թուղթ գրիչ ճարեց ու քովս եկաւ: Ուրախութիւնը իր բուստէ բերնին ու խաժ աչքերուն մէջ կը ցոլցար: Աւազանին վրայի ուռենիին նուրբ ճիւղերուն շուքին տակ, քարէ սեղանի մը շուրջը բուրդուած երեքնիս՝ սկսայ էն առաջ աղտոտ թուղթի մը վրայ առնել ինչ բառ որ կ'ելլար իր չրթունքէն: Երբե՛ք այսչափ իրարու մօտիկ չէինք եկած, իր շնչառութիւնը կը գինովցնէր զիս, ու մազերուն ճակտիս հպումը՝ նոր սարսուռներ կը ներարկէր մորթիս մէջ:

Ահաւասիկ նամակը որուն ամէն մէկ մասը գրած պահուս կը թարգմանէր մամասս, «Սիրելի Ալէքօս»,

«Տարի մը կ'ընէ որ բաժնուած եմ քեռէ, «եթէ գիտնայիր ո՛րչափ սիրտս կոտրած է... Մինչեւ հիմա վեց հատ կարմուռ կ'ըլլայ մէկդի դնել: Ինծի գրէիր որ ասպառը կ'օգտէ՞ մեր հարսնիքին ծախքերուն:

Երկինքը եթէ վրաս փլչէր, նուա՞ղ ցաւ էր մէկդիս՝ որքան հիմայ, նշանածի այս նամակը գրած պահուս...

... Երկրորդ տարին նորէն հոն գացինք օգափոխութեան: Գործի էի, Գալիօրիէն աղօտ յիշատակ մը միայն մնացած էր:

Զինքը նո՛յն տունը գտանք դարձեալ իր սպասուհիի ստոր պաշտօնին մէջ: Կարգուած էր հիմայ, ամուսնութիւնը փոքր մը չէր փոխած զինքը: Ան աղջիկն էր նորէն, ղուարթ, շաղակրատ, փնթի արդուղարդով աղջիկը, ծիծաղը մարդրիտ ակոսներուն և «Ելա էլա՛ Մառկառօն բերնին մէջ»,

Մամաս հարցուց թէ երջանի՞կ էր մի:

— Ինչպէ՞ս չըլլամ, Ալէքսն ի՞նչ է հիմա, պատասխաներ էր :

Այս զիմն էն իր մէջ չէ՞ր ուռեցներ ներքին ճշմարիտ գոհունակութիւնը :

— Իրաւ է որ իրմէն հեռու եմ, կը յարէր. կը տատիւմ, կը յոգնիւմ կոր օտարին քով, բա՛հ... զաւ ամուսն կ'երթամ կոր նորէն :


Իրեն կը նայէի. Ո՞ր կին սա՛ տարիքին՝ իր ամուսնին վրայ այսպէս գուրգուրացող, հոգի՛ սուտղ :

Աշխարհիկ կեանքիս մէջ անոր պէս աղուոր՝ տրցակնե՛ր տեսած, տեսնուած հետերնին ու ճանչցած հիմայ անամէջութիւնը տարփանքի գինովութիւններուն եւ բոլոր այն զգացումներուն որոնք համակրանք, պաշտում, սէր բառերուն մէջ կը պահուէին, բայց ատոնց քով, ատոնցմէ դուրս փնտռեցի նորէն իմ առաջին յոյսերս ու առաջին պարտուներս որոնք իրաւցունք՝ անցան ներսէս այս Գալիօրիին համար, աչքս կեանքին վրայ նոր բացած ատենիս :

Մոռցուած ատոնք, քունիս երբեմնի աքսորը, գաղտ հալումաշ, մոռցուած բոլորն ալ, անձանթ ժամանակի մը մէջ անցուած խենթութիւններ տղայական...

Գուրգուրանքով ծալլեցի նորէն այդ երկուսի մեծութեամբ դեղին թուղթը՝ որուն վրայ ժամանակին՝ երջանկութեանս մահազդը գրած էի չը գիտցած լեզուովս, թո՛ւղթ որ վերապրիլ տուաւ ինձ պահ մը վերջին վաքանսիս այն քանի մը շարաթները՝ որոնց մէջ տառապած էի այսպէս աղախինի կտորի մը համար :

Դ. Կ. Մանուկ



ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹԻՒՆ

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՒՍ Ա.

ԱՄՓՈՓՈՑՔ. — 1. Ֆիզիկական դաստիարակութեան նպատակն է մարմնոյն տալ այն խնամքներն որք քաջառողջ պիտի պահեն զայն եւ անոր անդամներն ու գործարանները զարգացնելով պիտի զօրացնեն. — 2. Ֆիզիկական դաստիարակութիւնն ինքնին մեծ կարեւորութիւն մը ունի. սակայն եւ այնպէս հոգւոյն դաստիարակութեան ստորագրաւ ըլլալու է. — 3. — Ֆիզիկական դաստիարակութիւնը հետեւեալ երեք կէտերը կ'ամփոփէ. Ա. Առողջապահական տեսակէտով, ձեռք առնուելիք խնամքներ եւ տրուելիք խորհուրդներ. Բ. Ուժեղութեան զարգացումը, եւ տղայոց մարմնակրթական տրուելիք ուղղութիւնը. Գ. Զգայարարաց կրթութիւնը. — 4. Դաստիարակն իր դպրոցին մէջ անձամբ ձեռք առնելիք զգուշութիւններ ունի, օղիւն նորոգութեան, բաժնիստութեան, լուսոյ, մաքրութեան տեսակէտով: —

Ֆիզիկական դաստիարակութեան առարկան ու կարեւորութիւնը. — Ֆիզիքական դաստիարակութեան առարկան կը կազմեն մարմնոյն տրուելիք խնամքները, զայն քաջառողջ պահելու եւ անոր անդամներն ու գործարանները զարգացնելու եւ զօրացնելու համար: Անտարակոյս դաստիարակը, իր աշակերտաց նկատմամբ, յատկապէս մարմնոյն մասնաւոր խնամքներով զբաղելու պարտականութիւն չունի, այդ գործը կը վերաբերի ի հարկէ ընտանիքին. Սակայն եւ այնպէս շատ կը սխալի, եթէ կը կարծէ թէ անոնց ֆիզիքական դաստիարակութեան հանդէպ կրնայ բոլորովին անտարբեր մնալ. բայց այն առողջապահական միջոցներէն որոս ինք անձամբ պիտի տնօրինէ դպրոցին մէջ, իր աշակերտներէն պարտի պահանջել կարգ մը զգուշութիւններ այն ժամանակին

համար զոր անոնք իրենք քովը կ'անցընեն, դաստիարակը պարտականութիւն ունի ընդհանուր խրատներ տալու, անոնց զբօսանքներուն ու խաղերուն ուղղութիւններ դրոշմելու, առանց հաշուելու այն բազմաթիւ կէտերն ուր մարմնոյն դաստիարակութիւնը առընչութիւն ունի հոգւոյն դաստիարակութեան հետ:

Ֆիզիքական դաստիարակութիւնը մեծ կարեւորութիւն ունի մանաւանդ անոնց համար, որոնք ձեռական աշխատութեանց սահմանուած են. իրենց տկարացած ու հիւանդոտ մարմնով ինչպէ՞ս պիտի կրնայ, օր մը, հոգալ իրենց պէտքերը, ինչպէս եւ իրենց ընտանեաց պէտքերը, ապահովել զաւակներուն ապագան, հանապազօրեայ հացն անգամ հայթայթել: Միւս կողմէ, բոլոր մարդոց մէջ ալ հոգին պարտի հրամայել և մարմինն՝ հնազանդիլ, և անգոր ուսաստուր մը ինչպէս պիտի հնազանդի տիրոջ հրամաններուն: Տկար էակէ մը ի՞նչ կրնանք սպասել, բարւոյն կիրառութեան և առաքինութեան պայքարներուն համար: Ընդհակառակն, եթէ մարմինը զօրացած է, եթէ ի տղայ տիոց մարմնակրթանքով դիւրաթեք եղած է, ո՛չ միայն աւելի դիւրաւ և աւելի ազդուաբար պիտի հնազանդի, այլ և նկարագրին կորոզի ալ պիտի զարգանայ, բարոյական կրկին օգո՛ւտ մը անհատին համար:

Ինչպէս կը տեսնուի, եթէ ֆիզիքական դաստիարակութիւնը կարեւոր է չաչս մեր գլխաւոր պատճառը սա՛ է որ իր աջակցութիւնը կը բերէ բարոյական դաստիարակութեան: Միշտ մեր աչաց առջեւ ունենանք վախճանական նպատակը, երբ անոր հառնելու միջոցներէն մին կ'ուսումնասիրենք: Ի՞նչ բանի պիտի ծառայէր պատրաստել գործիքը, եթէ զանց առնուէր գերագոյն զսպանակը, որ պիտի չարժէ զայն: Որովհետեւ նիւթը ստորադաս է հոգւոյն. մարմնոյն դաստիարակութիւնն ալ ստորադաս լինելու է հոգւոյն դաստիարակութեան, եւ իր նպատակը պիտի ըլլայ միշտ օգնել անոր: Այս տեսակէտով միայն պիտի խօսինք ֆիզիքական դաստիարակութեան վրայ:

Երեք գլխաւոր առարկաներ հոս դաստիարակին ուղադրութիւնը կը հրաւիրեն.

1. Առողջապահական սեսակեռով՝ ձեռք առնուելիք խնամքները եւ տուելիք խորհուրդները: 2. Ուժերու զարգացումը եւ տղայոց մարմնական մարզանքներուն տուելիք ուղղութիւնները: 3. Զգայարաններուն դաստիարակութիւնը:

1. Խնամքներ ու խորհուրդներ՝ առողջապահական սեսակեռով

Դաստիարակը, ըսինք, դպրոցին մէջ անձամբ պարտի տնօրինել առողջապահական միջոցներ: Ասոնք կը վերաբերին օդին նորոգութեան, բարեխառնութեան ու մաքրութեան: Ասոր կարեւորութիւնն այնքան դիւրըմբռնելի է որ հարկ չթողուր մեզ մանրամասնօրէն խօսիլ այս մասին:

Օդը կեանքին էական սատարն է, մաքուր օդը քաջառողջութեան առաջին պայմանն է: Սակայն դպրոցին մէջ օդը շարունակ կ'ապականուի շնչառութենէն որուն կողման միանալ քրտինքի, հագուստներու, և յաճախ ևս կողոզներուն պարունակած սնուդներուն արտաբուրումները: Բացի մաքրութեան խնամքներէն, զորս դաստիարակը պարտի տնօրինել և տնօրինել տալ տղայոց, պարտի նաեւ ամենամեծ ուղադրութեամբ հսկել օդը նորոգելու նոյնքան ստէպորքան կը պահանջէ տեղւոյն տարածութիւնը, աշակերտաց թուոյն և ապականութեան ուրիշ պատճառներու տեսակէտով: Ընդհանրապէս կը կարծուի թէ աշակերտ գլուխ 3—4 խորանարդ մէդր օդ չափազանց չէ այն 3—4 իրերայաջորդ ժամերուն համար զորս դաստարանի մէջ պիտի անցընէ: Եթէ որահը բաւական տարածութիւն չունի, պէտք է ատեն ատեն օդը նորոգել մէն մի պատուհանի վրայ դրուած փոքրիկ դռնակներու (vasistas) միջոցաւ, այնպիսի կերպով մը որ օդին հոսանքը տղայոց գլխուն վրայէն անցնի առանց անոնց հասնելու, ինչ որ ամենակարեւոր պայման մ'է: Բայց մանաւանդ դասասօսութեան ժամերէն վե՛րջն է որ պիտի նորոգուի օդը. բոլոր պատուհաններն այն ատեն յարատեւ բաց պիտի պահուին: Ասկէց զատ, ամէն անգամ որ օդին բարեխառնութիւնը ներէ և գլխաւորաբար ա-

կիններովը՝ Այդ ոսկիններէն շագա՛ծ, կուրցած էր։ Հիմայ սակայն, քանի՛ պիտի սիրէր ապրիլ աղքատ թէեւ այլ բարեսիրտ, ազնիւ կնոջ մը հետ հանգստաւէտ կեանքով մը։ Որքա՛ն դառն է հիւսա, որքա՛ն անհանդուրժելի՝ ըլլալ գերին, ամէն վայրկեան իր չքնաղ աղջկան սպառնացող այս հարուստ, այս չար, այս հրէշ կնկան։



ԹԵՐԹՕՆ ՀԱՆՐԱԳԻՏԱԿԻ

1898

Ե



ՅՍ սլացող ճիշը, սակայն, որ արդէն զարնուողի մը արիւնալից հառաչին կը նմանէր, Ֆիմիի կեանքէն ալ բան մը կը պարունակէր կարծես իր մէջը։ Այդ օրէն սկսեալ հէգ աղջիկը զգալի կերպով փոխուիլ սկսաւ, այնպէս որ քիչ ատենուան մէջ անցեալ Ֆիմիէն ալ յիշատակ մը միայն մնաց ներկայ Ֆիմին։

Եւ հասաւ այն օրն ալ, ուր Ֆիմի, ալ անկարող իր ուժասպառ սրունքներուն վրայ կրել թեթեւ մարմինին բեռը, անկողին ինկաւ։

— Ոչնչութիւններու, անխելքութիւններու հետեւա՛նք, կը մրմռար մերթ ընդ մերթ Լուսեա, ասիկա լաւ խրատ մըն է իրեն։

Եւ կը հիանար իր հերթիկին վրայ որուն մէջ կատարելապէս յաջողած էր։ Ղրկած այցատումէն ետք գիշերները շատ ժամեր հսկած՝ տեսած չէր վահէին ա՛լ ան կողմերը «սլքտալ»ը, Ֆիմին ալ անշուշտ այլեւս վստահ էր եղած թէ այդ նամակին հեղինակը իրապէս վահէն էր, քանի որ գըրուած էր հոն. «...Օր մըն ալ երբ վստահ ըլլամ թէ կապած եմ աղջկանը սիրտը անքակտելի կապով մը, յանկարծ պիտի դադրիմ թափառելէ ան կողմերը։ Յաջողելու լաւագոյն սխաղէմն է այս»։

Իսկ հայրը շատ հեղ անոր հալած, վշտագին ու երկնագեղ աչքերուն վրայ տեսող նայուածքներ կը ձգէր ու յետոյ անդին կը դառնար կամ պատուհանէն դուրս կը նայէր՝ աչքերուն մէջ լեցուած արցունքները ծածկելու համար։

— Արեան նուազութիւն է, զօրացուցիչ դեղերու պէտք ունի, յետոյ դարնան՝ օդափոխութիւն, կ'ըսէր բժիկն ալ՝ շտապով դեղագիրը գրելու զբաղած։

Օրերը կը յառաջանային սակայն ու Ֆիմի կը պառկէր հետզհետէ աւելի օկարանալով, հիւծելով. կը պառկէր լըռիկ, իր զարգարուն, սիրուն սենեակին մէջ. գլուխը բարձին սպիտակութեանը վրայ, տխուր ու քաղցր անտառանկարին վրայ նայող պատուհանին դիմացը :

Ի՞նչ եղած էր սակայն իր խռէալը. արդեօք՝ հաւատալով այլևս թէ իրօք Վահէն իր գաղափարած հոգին չէ եղեր, հրաժարած էր ալ անով զբաղելէ ու մոռցած էր զանիկա : Այն ատեն ինչո՞ւ ուրեմն շարունակ այս խորին ալափոխութեան ենթարկուէր, ինչո՞ւ տակաւին իր պառկած տեղէն, բոսացած այտերու վերեւը նայող երկու ցաւազին աչքեր, անարտայայտելի արտայայտութեամբ մը ժամերով հեռուները՝ անորոշութեանց մէջ յառէր կամ իրր թէ անէացմամբ մը մոլորեցնէր տակաւին այդ տուայտ նայուածքը դէպի այն ծառուղին ուրկէ եկած էր օր մը Վահէ եւ ուրկէ երեւան ելած էր ան, օր մը, մութ գիշեր մը, ինչո՞ւ մերթ յուսահատութեան անձնաւորումը իսկ կ'ըլլար եւ մերթ ժպիտ մը զինքը կեանքին ամէնէն սիրահար էակը կը հանդիսացունէր : Հոգեկան այս հակոտնեայ վիճակները ցոլացնելու համար պէտք չէ՞ր որ ներքին աշխարհին մէջ բուռն, անսովոր տագնապներ ունեցած ըլլար ան կամ նոյն իսկ, միշտ, յոյս մը իր խռէալը իրագործելու համար... ուրիշ կեանքի մը մէջ թերեւս...

Այս զանազան վիճակները սակայն միակ նպատակի մը կը ձգտէին՝ կրծել Ֆիմի մարմինը, ծծել, հատցունել անոր կեանքի հիւթը... Եւ որոնց սակայն կը հանդուրժէր ան, Սուրբի մը պէս քաղցր, Մարտիրոսի մը պէս խրոխտ, Քրիստոսի մը սէս անտրտունը...

բարոսի մը, սատանայի մը ձեռքն է. մայրդ գրած է այդ թուղթերը, մայրդ՝ որուն նստատակը չէ չքու շահդ, բարիքդ, քու երջանկութիւնդ՝ այլ քեզի տանջն'լ, քեզի մեղացունել միայն...

Եւ սակայն ինչո՞ւ բարձրաձայն չէր ըսեր այս խօսքերը. այս ամէնէն աւելի խօսիլ հրաւիրող ողբերգական տեսարանին հանդէպ ինչո՞ւ տակաւին լուռ կը մնար, ի՞նչ բան պիտի կրնար տակաւին կաշկանդել իր խօսելու ազատութիւնը...

Ի՞նչ բան :

Բայց, որովհետեւ, ա՛հ, եթէ մինչեւ ցարդ իր կնկանը ամէն բռնակալ քմահաճոյքներուն, այլանդակ կամքերուն առջեւ գլուխ ծռելու անհաւատալի հաճոյակատարութիւնը ունեցած էր՝ պատճառը Ֆիմին էր եղած միայն. Ֆիմին՝ որմէ անտես, անծանօթ պահել ուզած էր ընտանեկան գայթակղութեանց ապականող ու ստորնացունող վիճակները : Եւ արդարեւ, հիմա իր մօր յարած դարանը այս աներեւակայելի վատութիւնը, ցածութիւնը իմացունելով, միթէ՞ բանալ ուզել չը՞ պիտի ըլլար ամէնէն սոսկալի տառապանքներուն, անվերջանալի տագնապներուն աղբիւրը : Անկէ անդին այլևս պիտի կրնա՞ր Ֆիմի զանի «Մայր» անուանել, պիտի կրնա՞ր հանդուրժել, յետոյ, այդ դաւաճան մօր ներկայութեանը... Ուրեմն պիտի շարունակէր իր լուռութիւնը, համբերատարութիւնը, ըլլա՞ր այդ լուռութիւնը, համբերատարութիւնը, ամէնէն աւելի զինքը մաշեցունող անձնազոհութիւնը, այո՛, քանի որ իր տառապանքը պիտի ծառայէր զերծ պահել Ֆիմին տառապելէ՝ այդ անմեղ աղջիկը :

Ցարդ, ամուսնութենէն ի վեր շատ տառապած էր. բայց ինքն իսկ եղած էր իր տառապանքներուն բուն պատճառը, քանի որ ամուսնանալ յանձն առած էր հակակրեւի կնոջ մը հետ որ իր համեստ աղքատութեան վերջ պիտի տար իր ոս-

աւելի կ'ազարեկէր նաեւ, Լուսեաի գործած բարոյական այս անիմանալի ոճերին վրայ խորհելով: Ու կը սոսկա՛ր, ու չէր ուզէր դեռ հաւատալ և չէր գիտեր թէ ինչպէ՞ս պիտի կըրնար փրկել իր հրեշտակը այս դժոխային կնոջ, այս ճիւղ մօր ճիրաններէն՝ երբ յանկարծ սուր ու ցաւագին ճիչ մը լսուեցաւ վերէն: Յնչուեցա՛ւ: Մտքէն արագ դէմյանդիմաթիւն մը սլացաւ. ու զարհուրելի կատաղութեամբ վեր թռելով փայլալի պէս արագ՝ դուռը բացաւ խստութեամբ եւ տեսաւ հոն Ֆիմին, թիկնաթուռի մը մէջ ինկած մեռեալի մը պէս գունատ, նիհար՝ կիսանուաղ վիճակի մը մէջ...

Նամակին հետեւանքն էր:

Այնքան կորսնցուց պաղարիւնութիւնը որ քիչ մնաց Լուսիայի վրայ յարձակէր ու գետնէ գետին պիտի գարնէր կատաղութեամբ: Բայց գիտցաւ՝ ինչպէս բազմիցս, նոյնպէս և այս անգամ զսպել ինքզինքը:

Ֆիմին քովիկը գնաց: Ձեռքը բռնեց՝

— Հանդարտէ՛, ըսաւ միայն:

Մինչդեռ Լուսեա առանց եղածին հիւլէի մը չափ արժէք տալու, կ'ըսէր ամուսնոյն երեսն ի վեր, կատաղութիւն թելադրող վայրագ շեշտով եւ կերպարանքով:

— Է՛... մի՛ շփացուներ տղու մը պէս... դուն ալ սքանչացիր որ Աստուած գիտէ ամէն բան իր ժամանակին ընել. Աստուծոյ սուրբ ձեռքն է որ այս նամակը գրած ու զրկած է...

Հայրը որ քիչ մը առաջ ծառային զգուշութիւն, գաղտնապահութիւն կը պատուիրէր, հիմա ինքը այս տեսարանին դէմ ամենէն աւելի անդիմադրելի պէտքը կ'զգար գոչելու:

— Ձէ՛, Ֆիմի, չէ՛, սիրական աղջիկս, մի՛ հաւատար, սո՛ւտ է. մի՛ տառապիր. այդ նամակը զրոյցը Աստուծոյ ձեռքը չէ՛, այդ նամակը բարեկամ մը չէ՛՝ գրողը, այլ բար-



ՄԱՌՈՒԱՆ հեշտութեան և գարնան անգին անուշութեան պատրանքը ընծայող աշնանավերջի գիշեր մըն էր:

Ա՛լ շունչի մը պէս տկար էր Ֆիմի:

Անքուն գիշերներ կ'անցունէր ան. Այդ գիշերը միայն հրաշքով քանի մը ժամերէ ի վեր կը քնանար, երբ յանկարծ ընդոստ արթնցաւ:

— Աստուած իմ, թոթովեց, ա՛խ, ի՞նչ կայ... ի՞նչ եւ՛ղայ... ի՞նչ եղաւ...

Եւ չէր կրնար գիտնալ թէ ինչո՞ւ առանկ վախով և ցընցումով արթնցած էր իր քիչիկ մը քունէն:

Հոգին անծանօթ յոյզերով խռոված՝ կը սարսուար, կը դողդողար իրրեւ թէ ջղաճգական տենդով մը... Կը կարծէր թէ պիտի մեռնէ՛ր ալ...

— Ձէ՛... կը մրմնջէր հեւալով, չէ՛... դեռ մեռնիլ չեմ ուզեր... Աստուած իմ, խնայէ ինծի... քանի մը ժամ ալ կեանք տուր ինծի... պէ՛տք ունիմ... պէ՛տք ունիմ, ա՛խ շա՛տ պէտք ունիմ...

... Շո՛ւրջը կը նայէր... լուսընկան իր ջինջ լոյսովը ողորած էր սենեակը, Լուս էր սենեակը, լուս՝ տունն ալ, ամէն ինչ լուս, բացի իր հոգիէն ուր խուլ որոտումներ կը գահավիժէին:

Ժամացոյցը ինը վարկաւ այս պահուն. դեռ արշալոյսը ծայր իսկ չէր տուած:

Անդիմադրելի մագնիսականութեան մը պէս զօրութիւն մը այս վայրկենին յանկարծ աչքերը պատուհանէն դուրս ուղղել տուաւ, նայեցաւ հո՛ն, անտառին մէջ նայեցաւ

չնչասպառ . ծառերուն ստուերներուն մէջ բան մը կը խը-
լտէր , ստուեր մը կը շարժէր . սարսուռի ջերմութիւն մը
ամբողջ էութիւնը պատեց . դողը սաստկացաւ ու ակունքերը
սկսան իրարու զարնուիլ . ամբողջ էութեամբը կը դղրդէր ,
ու աչքերը խոշոր խոշոր բացած , իրր թէ խելայեղ , և շատ
օրերէ ի վեր առաջին անգամ ըլլալով գլուխը բարձէն ան-
ջատած , անընդհատ հոն կը նայէր , այդ ուրուականին , այդ
շարժող , տեղափոխուող ուրուականին :

Յանկարծ այդ ստուերը լուսնին յորդ մէկ ճառագայթին
մէջ եկաւ . . .

Հոգեոյ գերագոյն վայրկեաններ կան ուր ջղագրգռու-
թիւնը և կամքը միացած ու բազմապատկուած իրենց գոր-
ծունէութեանը մէջ , հրաշքներ գործելու կարող են . . . Այս-
պէս ալ Ֆիմի նոյն պահուն ինքզինքը կարող զգաց , ուժով ,
կեանքով լեցուն զգաց և ամիսներէ ի վեր պառկած անկո-
ղինէն փայլակի պէս արագ նետուեցաւ , պատուհանին առ-
ջեւը սլացաւ , հրեց , բացաւ պատուհանը ու դուրս կախ-
ուեցաւ ու խենդի պէս աչքերը տնկեց հոն արձանի պէս
կեցող ու վիլլան և թերեւս իրեն ալ նայող այդ սիւ-
ռէթին . . . ա՛խ , չէր խարուած , ալ յստակօրէն կը չըջա-
գծուէր ու այդ երանելի գիշերուան պէս ալ ամէն մանրա-
մասնութիւններով կը տեսնար զանի . զլխարկը լայնեղր ,
երկայն մազերը , հոյակապ հասակը . . . ա՛խ , ա՛ն էր , ա՛ն . . .
Վահէ՛ն էր . . . Վահէ՛ն . . . օրերէ՛ , ամիսներէ ի վեր կոր-
սուած Վահէն , իր խոհանքներուն զօրավիգը , սրտին միակ
բարախիջ զօրութիւնը , իր մոտաւիպարը , իրեն իտէալ մը
ներշնչող էակը . . . Վահէն էր իր շունչը , իր հոգին , կեան-
քը . . . չէ՛ , երազ չէ՛ր այս , աչքի պատրանք չէ՛ր այս . . . Ո՛ր-
քան աղէկ էր այսպէս հիմա . ո՛րքան պիտի ուզէր յաւէտ ա-
սանկ մնալ , ասանկ նայի՛լ . . .

. . . Բնութիւնը լուռ էր ունկնդրող լուսթեամբ մը եւ
լոյս էր ցորեկուան պէս . լուսընկային բնութեան մէջ իջե-

բայց ես ծառայ մըն եմ , էֆէնտի , ու հնազանդիլ պարտիմ
ինծի հրամայուած խօսքերուն . ուստի բերի նամակը : Բայց
նամակը յանձնելէս ետքը , չեմ գիտեր ինչո՞ւ չը կրցայ դրան
քովէն հեռանալ : Ան ատեն խմանալով այն ծա՛նր խօսքերն
ալ որ չը գիտե՛մ ինչպէ՞ս Հանրմիւս բերանը վրայ գնաց ,
ինչպէ՛ս համարձակեցաւ ընել Ֆիմիի պէս չը գտնուա՛ծ աղ-
ջկան , յուզուեցայ և պատրաստուեցայ՝ մոռնալով որ ես
նոյն ծառան էի՝ . ներս մտնալ և ըսել ձեզի իրողութիւնը ,
թէ՛ առաւօտուն այդ նամակը կամացուկ մը Հանրմը ինծի
յանձնեց պատուիրելով որ երբ դուք երեքնիդ ալ սենեակը
գտնուիք , ծածուկ մը դրան մօտիկը սպասեմ . և որ ատեն
ինքը քահ քահ խնդալ սկսի , ներս բերեմ նամակը , ձեզի
յանձնեմ ու եթէ հարցունէք թէ ո՞ւրկէ է , պատասխանեմ
թէ «անծանօթ մէկը բերաւ ու առանց պատասխանին սպա-
սելու գնաց : Երբ ներս պիտի մտնէի ալ , դո՛ւք , էֆէնտի ,
դուրս ելաք և հիմա միայն ձեր ներկայութեան ըսել պար-
տաւորուեցայ ճշմարտութիւնը :

Թշուառ հայրը այս խօսքերէն կրեց այն տպաւորութիւ-
նը զոր պիտի ունենայ մարդ երբ գլուխն ի վար եռացող
ջուր թափուի . . . Ապուշի պէս մօտիկ ըրաւ ու դեռ ապուշի
պէս հոն կայնած՝ չէր գիտեր թէ ի՞նչ ընելու էր . . . Անըզ-
գայացեալ վիճակի մը մէջ էր ու իրականութեան գիտակցու-
թիւնը կը խուսափէր իրմէն . ա՛լ ա՛յսքանը երբեք չի պիտի
կրնար երեւակայել , չի պիտի կրնար սպասել լուսեալէն :

— Ծնորհակալ եմ քեզի , պատուական բարեկամս , ըսաւ
ծառային , հեղձամիճուկ ձայնով մը ու չուարած . բայց խոս-
տացիր ինծի , խոստացիր որ այս բաներուն վրայ պզտիկ մը
խսկ տարակուսելու չէ Ֆիմին , պզտիկ կասկած մը խսկ պէտք
չէ ունենայ ան . . .

Ու դեռ հոն կայնած , քար կտրած , անցած դարձածին
վրայ կը խորհէր , և հետզհետէ աւելի կ'զմայլէր այն ազնիւ
յանդգնութեանը՝ որով Ֆիմի խօսիլ էր սկսած , և հետզհետէ

ԹԵՐԹՕՒ ՂՈՂԱԳԻՏԱԿԻ

1999

ռած՝ հեծած թեւաւոր Պեգասիդ վրան, որ-
դեգի՛րդ Ապոլոնի, կը ճախրէս վեր, դէպ ի
Պառնասոսի գագաթը... յառա՛ջ վարէ
ճախրանքդ. դայեկորդի՛դ մուսայից, սլացի՛ր
Հասիր կամենայց գիրկը, ծծէ անմահու-
թեան նեկտարը, և քնար ի ձեռին իջի՛ր
նուազելու, մոգելու, դիւթելու ինձ ու
քեզ միապէս սիրելի Պարտիզակին սարն ու


լեռը, դաշտն ու ձորը, օդն ու ջուրը, զե-
փիւռն ու սոխակը, առուակն ու ծործորը,
կալերն ու Լոյս Աղբիւրը:

Ողջո՛յն մը այդ անուշակ վայրերուն հե-
ռաւորէս. բի՛ւր ողջոյն և քեզ և շնորհա-
կալութիւն:

11 Մարտ 900

Հ. ԱՐՆԷՆ ՂԱԶԻՆՍԱՆ

Վեցեթիկ



ՃԱՄԲՈՒ ՆՕԹԵՐ

ԿԱՐՄԻՐ ԾՈՎԼԸ

ՉՈՐՍ կողմէն փակուած խցիկի մը մըթ-
նորտին մէջ, նորէն կը դառնան երէկուան
յիշատակները:

Ջրանցքը, Թիմասհի լիճը, Իսմայիլիան,
ճերմակ ու թախծոտ՝ աւազներուն ու գի-
շերուան մէջ: Հոս, մեր ըմբռնումները կը
չփոթուին, տպաւորութիւն մը կը ծագի,
ջերմութեան, լճացումի — թերեւս դադար
մը Սուէզի գիրկը — տպաւորութիւն մը
խառնակ, յեղակարծ ծփծփանքով, բուռն
ճօճումներով. մարդու մը երեւոյթը որ նա-
ւախուցը կը մտնէ, երկաթէ երկար ձող մը
ձեռքին մէջ, ծնրադրելով անկողնիկի մը
քովիկը, — ա՛յնքան կծկուած են — և ուժ-
գնակի պնդելով պատուհանին պտուտակնե-
րը... Ու հիմա նորէն կը նաւենք ջուրին
ծոցը, Կարմիր Ծովուն գեղեցիկ ու չար ջու-
րին ծոցը:

Միջնորմին ու քիւին չատ մօտիկ, ալիք-
ները խաւարներուն չըջարը կ'եղանակա-
ւորեն ու նենդաւոր մռլտութիւն կ'երգեն գա-
հավէտին: Նաւը կը ծռի: Շփոթ աղմուկներ
կը լեցնեն զայն... Լոռութիւն մը: Ալիքնե-
րը ետ ետ կը քաշուին: Նաւը նորէն կը
կանգնի: Նորէն ալիքները. հեռուէն կ'ի-
մացուի անոնց խուժելը, անհաստատ ու
մրմռուն տակաւին. յետոյ ուռեցնելով իրենց
մարմինը, ուռեցնելով իրենց ձայնը, կը վա-

զեն, կը քալեն նորէն... կանգ կ'առնեն,
յետոյ կարգաւ թաւալուն — ծովային վալ-
գիրուհիներ — կը յարձակին նաւուն վրայ:

Իրենց խոնջած պատառները ողնափայ-
տին տակ կը մխրճին: Բաղխումին, կորան-
ցուցած են իրենց պճինքը, իրենց պատմու-
ճաններուն մարգրիտները կը հոսհոսին ապա-
կիններուն վրայ, փունջերը իրենց վարսերուն
կը կախուին թնդածակէն (sabord):

Ստուարատուփերը ու հովանոցները կ'իյ-
նան. կառչուած հանդերձանքները մէկ ծայ-
րէն միւսը կը հովտեն նաւախուցը: Գա-
ւաթներն ու սրուակները կը խնդան բիւ-
րեղային խտիղներով — իրենց պարզ հոգի-
ները կ'զբօսնուն ծովին ահաւի խաղին հետ:

Ու մենք ալ այնպէս կ'ընենք: Այս խցի-
կին մէջ, բոլորովին փակուած, բոլորովին
ճերմակ, — աւելի մոտերիմ՝ իր խառնափնդո-
րումովը — կծկուած անկողնին ապահով ան-
ձուկի մը խորը, մարդ կ'զգայ որ ա՛լ խեղճ
պզտիկ բան մը եղած է, պզտիկ չնչին բան
մը. որ կը ճօճի խելագար անհունութեան մը
վրայ: Ու կը դիտեմ չարաճճի խինդով մը
մղումները ու ընկրկումները ծովին. անոր
ձայնին սաստկութիւնը կը կապկեն, կը ծաղ-
րեն անոտի զայրոյթը հարուածներուն, շի-
տակ ուղղուած անկողնիկիդ դէմ:

Կով մը կը բառաչէ իր անձկութիւնը:

Շուն մը թաւալգլոր սաներուն աղմուկէն՝ կ'ոռնայ մահուան, տղաքներ կուլան, ու նորէն ալիքներուն վայրենի հագներգութիւնը կը գոռայ ծովուն վրայ: Իսկ խցիկին մէջ կուգան, նրբաձիգ, բիւրեղային հնչումները սնտոի հոգիներուն...:

Ընդհանուր տակնուվրայութեան մը մէջ, հապճեպով սպառուած բոլոր ճաշերէն միայն կարելի է օգտուիլ ռազմագիտական հնարքով մը կարենալ վայելելու համար ընդգիւծութեան վայրկեան մը ծովին դէմ: Ա՛հ, ո՞րքան ծիծաղաշարժ են առաջին ճախողութեանները. երբ ումպ մը լակելու համար՝ տակառիկ մը հատցնելու չափ պէտք եղած չարժուանքը կը ճգնի ընել մարդ. երբ, պարծելով իր անձին վրայ հաւասարակշռութեան մէջ դրած ըլլալուն համար պնակը ու գաւաթը, քովիններուն սանը ու դարեջուրը կը թափին ու կը թրջեն ծունգերը: Ա՛հ, խեղկատակութիւնը կարսօններուն վէտվէտուն, ծուռումուռ, հտպիտական շարքերուն, իրարմէ զատուած սրունքներուն վրայ ծռելով, երերցնելով իրանին, պրկելով ու ծռելով բազուկներն: Ու անյիշելի ճօճումը ծովագոգներուն չրջանակին մէջ, ընկուզելով ձեր անձը մելանոտ խոռոչներուն մէջ, բարձրացնելու համար ձեզ յետոյ երկինքին պայծառութիւններուն:

Ի՞նչ ճամբորդներ կ'առուրջին վրայ. հոն կենալու համար, անկողինը կապել կուտան: Տատանումներուն ամէն մէկ հարուածին, վեր կ'ելլայ ու վար կ'իջնայ անիկա. կառանները ձայն կը հանեն, պամպուն կը կըճրտայ, ու ծովը սեւ ու անյագ երախ մը կը բանայ, ու փրփրուտ լորձունքի ժայթ մը կը թքնէ...

Շատ մը օրեր, ճեղքելով կ'անցնինք կարմիր Ծովէն, պաշարուած իր քէնէն, ու հմայուած իր չարաշուք գեղեցկութենէն:

Արշալուսին, արեւն է որ կը ծագի ապակիփայլ ու բուռն ծովուն վրայ, վատառողջ ճղճիմ ծագիկի մը պէս ճահիճի մը եզերքը: Հարաւին կողմը, փայլահնացայտ յողացումն է — ոսկիէ ու զմրուխտէ կայծեր — աթթահարութեան պ'ս մահացու: Տենդոտ լոյսի մը տակ, հրաշէկ պազալդէ հրաբուխներ են,

փայլահնակերպ ժայթքումներ, մետաղային խեցիներու հետքեր: Յետոյ, երբ փոթորիկը ճայթի, երբ ցամաքահովը ծիւնքին հետ մեզի աւլէ, երբ ճաղկուած ծովը լայ ու հեծեծէ, իր առաքաստակալները ճկին ու լիսեռնիկները թակուին, այն ատեն, նաւուն մէջ կը սարսուայ անգութ, յուզիչ ու խելառ երգը առագաստածիգ չուաններուն ու սարաններուն վրայ:

Առաջին անգամ կարմիր Ծովը հարթ է գրեթէ, բայց ծովի մը երեւոյթը չունի: Իր գոյնը աւրօրինակ է ու սարսափելի, նաւընջագոյն տարածութեան մը վրայ կը նաւենք դէշ լուացուած վէրքի կարմիրով մը:

Արեւը կ'անհետի, իր վերջին ճառագայթները կը կանգնին երկինքին դէմ արիւնաներկ մատներու պէս, յետոյ, խոտորնակի, կը սահին բոսոր ծովին վրայ ու հրամայող շարժումով մը մեր նաւուն կը զըպչին:

Կը սարսուանք: Մա՞հն է որ կը յայտնուի մեզի...

Ու կը խորհինք երիտարարդ սպային, որ կը մեռնի նաւախուցին մէջ, ժահարոյր փոքր լուծուքէ մը:

.....

Մեռաւ արշալուսին: Ո՛չ մէկը կը ճանչնար զայն, ո՛չ մէկը կ'ողբայ զինքը:

— Այս կարմիր Ծովը աղետաբեր է հիւանդներուն, ըսաւ բժիշկը, մանաւանդ վերադարձին երբ Արեւադարձներէն կը դառնայ մարդ. ամէն մէկ ճամբորդութեան, հիւանդներէն շատերը հոն կը թողունք: Ընդարձակ գերեզման մըն է կարմիր Ծովը:

.....

Վրանին տակ պառկեցուցած են զայն: Ֆրանսական դրօշակ մը կը ծածկէ պաստառէ պատանքը, շատ երկար ու շատ լայն պատանք մը այս հալուճաշ խեղճ մարմինին համար: Մէկ քանի ճրագներ կը վառին անշմարելի բոցով մը օրուան պայծառութեան մէջ:

Ծովընկեցութիւնը որոշուած է իրիկուան ժամը տասնին:

Ճաշէն վերջ, բոլոր ճամբորդները վարը

կը մնան, չեն համարձակիր վեր ելլել դի-
ակին պատճառաւ :

Հո'ն բարձրը, ա'լ հանած են ծածկոյթ-
ները: Մեռելը առանձին է կամուրջին վրայ,
բաց ծովուն մէջտեղ, առանձին, լռութեամբ
չըջապատուած, առանձին, աստղերուն հետ
դէմ առ դէմ:

Ալիքները փոսփորափայլ են իրենց ոսկե
գոյն մարգրտաշաբերուն ծաղուցը մէջ որ հա-
տիկ հատիկ կ'իյնան ու կը ցրուին: Մեր բո-
լորտիւրը, ելեկտրական օձեր կ'ոստոստեն,
սպառնալից ցայտումներ, կանանջ գալա-
րումներ: Նաւը լուսեղէն տառերով կը գծէ
իր ճեղքը գիշերուան մռայլուտ շղարշին
վրայ...:

Գաղջ հով մը կը կախէ օդին վերքը:
Այնքան սպասած էր այդ հովիկին, ա'ն,
հէգ մահամերձը, իր խցիկին մէկ խորշը,
ու հիմա՛ է որ կը փչէ անիկա, շա'տ ուշ,
հիմա՛ է որ կուգայ զովացնել անոր առած
ճակատը...: Վեր վեր կը հանէ դրօշակին
մէկ քղանցքը, ու պատանքը շա'տ երկար
ու շա'տ լայն այս նքողուած մարմինին հա-
մար, կ'երերտըկի իրրեւ թէ նոր կեանքով մը
ոգեւորուած:

Զինուորները զայն կը տանին իրենց ու-
սերուն վրայ առած: Հրամատարը, սպա-
ները, նաւավարները, չքաղգեստներ հա-
դած, կը հետեւին մարմինին որ նեղ սան-
դուխներէն վար կ'իջեցուի, ու մութ խորշե-
րու մէջէն կ'անցուի: Տախտակի մը վրայ կը
դնեն զայն: Սպանիացի քարոզիչ մը նաւա-
ջահի(fanai) լոյսին տակ, դամիսանական մը կը
կարդայ: Աւստրիացի առաջնորդ մը աղօթք
մը կը հեծկտայ...: Սուլակի ձայն մը...
Մեքենան կանգ կ'առնէ: Տախտակը կը ձո-
ճի: Պատանքը վար կ'իյնայ, ու կը մխրճի
ոսկիին մէջ, հրայրքին մէջ, սպարապին մէջ...
Մտիկ կ'ընեն: Երկար կը տևէ իջեցնելը:
Սակայն ծանրութիւնները կը փութացնեն իր
անկումը: Վերջապէս թոյլ ճողփիւն մը,
Մարմինը յատակը հասած է, ճանչցած է
Ոչինչը...: Սուլակի ձայն մը...: Զուրը կը
փաթթուի պտուտակին, ու նաւը իր ճամ-

բան կը շարունակէ: Միակերպ: արագ, թե-
թեւ...:

Կամրջակը կ'ելլեմ նորէն: Նաւուն գո-
տիին վրայ ծռած, կը խորհիմ այս մահուան
վրայ այս ծովուն մէջ: Ինչպէ՛ս այնքան մեծ
տխրութիւն մը կրնայ մարիլ ա'յնքան փոքր
վայրկեանի մը մէջ: Նաւուն կեանքը նորէն
հագած է իր փճութիւնը. ոչ մէկը կը խորհի
անոր վրայ...: Երիտասարդ էր ան, հեղիկ
կերեւնար: Ինչո՞ւ մեկնած էր: Խնջ երազ
մը զայն կը մղէր դէպի Անծանօթը:

Ծովը նետեցինք զայն ու փախանք, Թո-
ղոցինք որ ինչայ փոսին խորունկը, իր
պատառէ պատանքին մէջ...: Եւ եթէ մե-
ռած չէ՞...: Եթէ տեսա՞մ է մեր մեկնելը...
Թերեւս կանչեց. թերեւս մեր ետեւէն վա-
զեց...: Բայց նաւը կանգ չառաւ...: Կը ծռիմ
դէպի նաւուն գծած ճեղքը...: ու ճինի պէս
բան մը կը տեսնամ...: Ու այս ճինէն երկու
փոսփորացող աչքեր դուրս կը տնկուին...
ու այդ փոսփորացող աչքերը կը դիտեն մեր
փախչիլը:

Վանկու համար ինձմէ այս սոսկալի դի-
ւալկումը, նաւուն առաջակողմը կ'երթամ:

Երբեք ասանկ պայծառութիւն մը չէ
տեսնուած: Ծովը ամբողջ փոսփորի պէս կը
ցոլցայ: Զուրին շերտերը պրիսմակներ են,
իրենց կատարները փլաթինէ ծոպեր են,
պերրոյակէ խոխներ, ոսկիէ ժաննակ-
ներ: Նաւուն կողերուն շուրջը լուսաճան-
ճել կը թաւային, պսակներ կը դարձ-
դարձին:

Բայց ահա՛ ծովը աստիճանաբար կը յուզ-
ուի, ալիքները կ'ուռին ու այտուցքներ կը
կազմեն—կարծես մեռելական հողակոյտներ:
—Ու բժիշկին խօսքերը նորէն կը յիշեմ:
«Ընդարձակ դերեզման մըն է Կարմիր ծո-
վը»:

Այո՛, գերեզման մը՝ ծրացող չէկ չիրիմ-
ներու գերեզման մը...:

Հողին վրայ ամէն մեռել իր մենաքարը,
իր խաչը ունի. ինչո՞ւ ծովը ալ չունենար
լուսաւոր չիրիմներ, նոր մահուան մը գա-
լուստը ողջունելու համար:

Շիրիմներու խումբ մը կ'անցնի... անտարակոյս հանգիստի դաշտ մը բոլոր ողջ կուլ տրուած նաւաբեկեալներուն :

Ահա՛ լատտափայտ մը ամբողջովին բռնկած պզտիկ կապոյտ բոցերով, հոգիներն անոնց որ, Անուրջին կղզիին համար նաւարկած, հիմա՛ ա՛լ մխրճած են խաւարներուն մէջ...

Ու չըմտիկ հուրեր են ասոնք, վառուած մատուռի մը ճրագներ, չողչողուն սիրտեր, աստեղացող բիրբեր :

Վաղը պիտի թողունք զայն : Այս գիշեր Պապ-էլ-Մանտէպի նեղուցէն կ'անցնինք : Պապ-էլ-Մանտէպ, Արցունքներու Դո՛ւռ, Աշխարհներու Դո՛ւռ...

Ք.



ՄՕՐՈՒՆ

Դեղեցիկ, պո՛ծառ, գաղջ, ցրեթէ ամառնային անուշ ցերեկի մը յաջորդեր էր գիշերը, տարօրինապէս ցուրտ ու քստմեկիօրէն տխուր գիշեր մը, որ խածնող հովերով կը սկսի ձմեռ ատեն Տարէնտէի ձորահովիտին մէկ ծայրէն միւսը, յուսահատեցուցիչ միօրինակութեամբ կը շարունակուի օրերով ու կը վերջանայ՝ ծնունդ տալով ստէպ խո՛ւլ, դժնդակ բուք փչօնի մը :

Ճիշտ այս պահուս գայլերը գիշերն իրենց օգնական առած՝ մինչեւ տունները կը սպրդին խիզախ ու անվեհեր, ու կը տանին իրենց հետ մարդ, շուն, ինչ որ պատահի :

Այն օրն ալ՝ իրիկնամուտին՝ յանկարծ օգը փոխուեր էր : Զինջ, կապոյտ երկինքը տեղի տուեր էր խոժռու, դժնէ, կապարի պէս ծանր ու ճնշող մութ մռայլի մը, որ կը շեշտուէր մանաւանդ չարաշուք, լացող քամիի մը անդադրում ողբ ու կոծերով : Ժամը երկու կը զարնէ :

Պզտիկ տղեկ մը՝ հագիւ հինգ տարեկան, նոյն միջոցին իր խորթ մօրը խժգուժիւններէն լեղապատառ՝ դուրս կը նետուի՝ մութին բոլոր արհաւիրքներուն ու ցուրտին սառեցնող սարսուռներուն բոլորովին անձնատո՛ւր... Խորթ մայրը՝ նստատաւոր առիթէն օգուտ քաղել ուղելով՝ անմիջապէս դուռը կը փակէ հէք անպաշտպան տղեկին առջեւ ու ինքը ներս կը քաշուի : Անողո՛ք մեզերան՝ որ դժոխային ատելութեամբ զինուած էր պզտիկ որրին դէմ, սա՛ գերագանց պատճառով միայն որ ան իր հօրը բովանդակ դուրգուրանքին առարկայ եղած էր, մինչդեռ միւս այն պզտիկը՝ դեռ եօթը տարեկան, զոր իրեն հետ բերած էր, էրկանը սիրոյն ու գուրգուրանքին չէր արժանացած երբեք : Ընդհակառակն տեսակ մը հակակրանքի, տոգոհանքի և մինչեւ իսկ էրիկ-կնկան յաճախաբէպ վէճերու առիթ տուած էր իր հարազատ զաւակը զոր խնեղենալու աստիճան կը սիրէր ինքը եւ որուն համար պզտիկ առարկութիւն մը իր սրտին մահացու գնտակ մը ուղղել կը նկատէր պարզապէս :

Եւ որովհետեւ հակառակ իր բոլոր գորովին ու մայրական հոգածութիւններուն՝ էրիկը կը շարունակէր իր բոլոր աղապատանքը թափել որ, պզտիկ տղեկին վրայ, ոչ իսկ առարկայ ընելու՝ ի՛ր իսկ զաւակը՝ ուշադրութեան, կինը սկսած էր տակաւ տակ զայն, ու այս ատելութիւնը օր քան զոր անսովոր համեմատութիւններ առնելով յանգած էր եղեւնական ծրագրի մը զոր գործադրել միայն կը մնար :

Մօրուն այնքան վիրաւորուած էր էրկանը ցուրտ սառնութենէն ի՛ր տղեկին նկատմամբ, որ իր կոյր վիրաւորանքին մէջ բոլոր պատասխանատուութիւնը իր խորթ զաւակին վրայ բեռցուցած էր : Կը կարծէր թէ ա՛ն էր միակ պատճառը՝ որով էրիկը չէ՛ր գգուեր ու շոյեր իր զաւակը զոր հետը բերած էր :

Ուստի խորհած էր մէջաեղէն վերցնել զայն ի՛նչ կերպով որ ըլլար : Պիտի մեռցնէր զայն՝ որ գայթակղութեան ինձոր եղած էր : Ու ատիթը ներկայացած էր վերջապէս :

Ժամը երկուքն անցած է շատոնց: Հէք պղտիկը ցրտահար ճնճղուկի մը պէս կըծկտած՝ դուրսը կը ճուայ, կը ճուայ միշտ, ողորմուկ աղաղակներ արձկելով, իր մօրուն կանչելով խղճալի՝ սրտակտուր եղանակով: Մօրուն իր ատելութեանը մէջ գազանացած, հրէշային խօլ խնդում մը ամբողջ սրտին մէջ ու անորակելի ժպիտ մը իր դիմադիծերուն վրայ՝ ոչ իսկ կը լսէ աղէգալար աղաղակները թշուառ պղտիկին, որ ա՛լ մոռցած վախի, սոսկումի, մանկային ընդվզումի ամէն զգացում, աւելի կը բարձրացնէ իր տրտում լացը, ոտքերը գետինը կը գարնէ յուսաբեկ ու կուլա՛յ, կը ճէ՛շ, կը կանչէ, կը կանչուըռտէ անճրկած ու միշտ աւելի՛ ցաւագին:

Իբր կէս ժամ կը տեւէ այս սրտաճմրկ եղբորդը: Պղտիկ տղեկը ձիւնին մէջ ու հովին դէմ բոպիկ ու պատառուն բաճկոնակի մը մէջ կը սարսռայ, կը սրսփայ, կը դողդղայ տերեւի մը պէս անչարժ, անզօր, ընդարմացած ալ գրեթէ, իր ձայնն ալ հակառակ իր բոլոր ճիգերուն՝ նուազկտած, մարած, ալ կոլուսած է իր թափը: Ա՛հ, ձայնը կը զլանայ իր գործը կատարել, հէք պղտիկին դժբաղդութիւնը արձագանգել: Ու պղտիկը՝ բուռ մը դարձած՝ գետինը կ'իյնայ ա՛լ ուժարեկ, ալցունքի շիթերն ալ սառած աչուկներուն մէջ: Հէք պղտիկը մեռնի՛լ, մեռնի՛լ կ'ուզէր վերջապէս:

Եւ ահա՛ դայլ մը՝ սովալլուկ ու արիւն-ռուշտ: Պղտիկը կը տեսնէ զայն իր անմեղ, սեւուկ աչուքներով, ոչ իսկ զիմադրութեան փորձ մը կ'ընէ. իր պտըտիկ թաթիկներն ու մինիկիկ ոտուքները ա՛լ չեն շարժիր: Ընդուն միայն կայ բերնին մէջ դեռ շարժուն ու կենդանի, ձայն տա՛յ մօրուն: Արդեօք պիտի լսէ՞, պիտի կողկողա՞յ իր սրտակեղեք գալարումներուն ու յուսակտուր ձայնի բեկրեկումներուն լուր: Կը փորձէ՛. խեղդո՛ւկ, կցկտուր բառն՝ մը կը թօթովէ, հեկեկաղին ու լալամուռնչ, Բայց ձայնը կը կորսուի հովին զայրացկոտ մոլուցքին մէջ, ու բառերը՝ կիսատ ու կերկերուն՝ կը խեղդուին կոկորդին մէջ:

Դայլը արիւնացայտ աչքերով ու մոլե-

գի՛ն թափով, կը յարձակի հէք պղտիկին վրայ ու բզիկ բզիկ կ'ընէ զայն մէկ երկվայրկեանի մէջ: Հովերը միշտ կ'ոռնան ու մռայլը եւս քան զեւս կը թանձրանայ, ոչ իսկ պղտիկ հետք մը մատնելով այս քստմնասարսուռ եղեռնագործութենէն:


* * *

Ի դուր կը փնտռեն զայն մինչեւ առաւօտ: Ամէն խուզարկութիւն ապարդիւն կը մնայ: Առտուան դէմ միայն, ճամբուն վրայ կը գտնեն քանի մը ոսկորներ, ոտքի, սրունքի ու թեւի յետին նշխարներ ու նաեւ գանկոսկր մը:

Պղտիկին գանկոսկրն էր՝ դեռարուսիկ մազերովը դեռ թա՛րմ ու տաքուկ: Չարաբաստիկ հայրը ճանչցա՛ւ զայն եւ մոլորագին ու խելայեղ՝ ձեռներուն մէջ կը սեղմէր հուսկ յետին չիշատակը իր սիրական զաւկին՝ ցաւատանջ մահերգե՛ր հիւսելով ու աղեգալա՛ւ ողբեր թռցնելով բարձրաձայն, ձիւնին մէջ տապալակելով, կուրծք ծծե՛լով ու մազերը փետտելով՝ խելացնո՛ր մտաւրկումի մը մատնուած անգիտակցօրէն, մինչ արեւը, անզգայ ու անտարբեր, կը ճառագայթէր տարօրինապէս ցուրտ ու տխուր գիշերէ մը հոտք՝ որ տեղի տուեր էր գեղեցիկ, պայծառ, դաղջ, զլէթ է ամառնային անուշ ցերեկի մը:

Տարեցի

ՄԿՐՏԻՉ Ա. ԹՈՒՐԵԱՆ



Արսուցեք. — ԱՐՄԵՆ ԼՈՒՍԻՆԵԱՆ

ԳՐԱՆԻ ԲԱՌԳՐՔՈՅԿ

ՖՐԱՆՍԱՀԱՅ

Գին 5 Ղրու

800 փոքրադիր երեսներէ բաղկացած սիրուն գրքոյկ մը, որ 13—14,000 բառերու ու ոճերու եւ ընթանեկան ասացուածներու հաւաքոյթ մ'է եւ Ֆրանսերէն ուսանողներու անբաժան ընկերը : Գնեցե՛ք մէկ մէկ օրինակ եւ ձեր զակիքն ձեռքը տուէ՛ք, վստահ ըլլալով որ այդ գրքոյկ պիտի սրէ անոր ուսման փափաքը : 10 օրինակ մէկէն առնողին 30 առ 100 զեղէ : Դիմեցե՛ք միայն Հանրագիտակի սնօրեմութեան :

Գրատուն Մարգարեան

Հաստատել 1805ին

Պատիւ ունի ծանուցանել այն բոլոր կըրթական հաստատութեանց որք գործակալութեանց հետ ու է չափադիտական պայմանագրութեաններ չեն կնքած, քչելոր համար անոնց դրքերը միայն, թէ պատրաստ է իրեն սեփական գիրքերը, որք մանկավարժական այժմու ընտրելադոյն ու դիւրուսոյց մեթոտներուն համաձայն պատրաստուած են, թղթատարի ծախքն իր վրայ ըլլալով՝ Պոլսոյ գնով զրկել ո՛ւր որ ալ ըլլայ : Յետագայ ցանկին մէջ նշանակուած են գրատանս սեփական դասագիրքերը, իրենց անունովն ու գնով :

Դործ. Բերականութիւն Ֆրանս. լեզուի

Գին 7 Ղր.

Ո՛վ որ կը փափաքի հմտանալ Ֆրանս. քերականութեան բոլոր նորութիւններուն, կրնայ վստահաբար առնել Պօղաճեան Ֆրանս. քերականութիւնը, որ պատրաստուած է Լառուսի, Կէրաոի, Լարիւլի և Պաշէի քերականութեանց հետեւողութեամբ, և բազմապիսի հրահանգներով ճոխացած :

Կը ծախուի բոլոր գրավաճառներու քով : Կեդրոնատեղին է Հանրագիտակի Տնօրէնութեան քով :

Հետեւեալ գրքերուն համար դիմել միմիայն

ՄԱՐԳԱՐԵԱՆ ԳՐԱՏՈՒՆ

Կ. Պոլիս, Մերձան փողոց, բն. 57

ՆՈՐ ՈՃՈՎ. ԴԱՍՏԱՆՆ ԳՐՔԵՐ

Մեծախմակ միջոց պատրաստ

ՄԱՆԿԱՆՑ ԳԻՐՔԸ կամ ՀԱՐՊԻՒ ԳԵՐԱԿԱՆ, Պատկերազարդ, բոլորովին նոր ոճով : Հատը 5 փարս :

ՄԱՐԳԱՐԵԱՆԻ, Մանկապարտէի-Ծագողի մանուկներուն համար, կ'ուսուցանէ կարգալ, գրել, զօն, կը բովազդակէ երգեր, խորհրդ, ստակներ եւ հանելուկներ : Գին 50 փարս :

ՍԻՐԻՒՆ, ՁԲՈՍԱԿԱՆ, Մանկանց երկրորդ գլխաւոր, կը պարուհազէ մանկական երգեր, կարճ հատուածներ, առաջներ, բարոյական փոքրիկ պատմութիւններ եւ առածներ : Թ.տպ. Գին 2 զրէ :

ՈՍԿԵՄԱՏՆԵՆԻ, Հայ աղայոց, երրորդ գլխաւոր, ընթերցանութեան Ե. Տպագրութիւն 120 պատկերներով : Կը բովազդակէ բարոյական գեղեցիկ պատմութիւններ, ստանաւորներ, երգեր, առածներ, կրօնական ու գիտական անհնարաբար գիտելիքներ, եւ ինչ, Գիրք մը արժանի իւր անունն եւ պիտանի ամէն Հայ աղայ : Գին 4 զրէ :

ՄԱՆԿԱՎԱՐՃԱՐԺԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, պատկերազարդ մասն Լ. Գին Լաթակազի 50 փարս :

ՄԱՆԿԱՎԱՐՃԱՐԺԱԿԱՆ ԳԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ, պատկերազարդ մասն Բ. Կ'ուսուցանէ իր անունն ոճով քերականութեան Ութ ՄԱՍՈՒՆՔ բաժին 100 մէծ եւ փոքր գեղեցիկ պատկերներով : Գին Լաթակազի 100 փարս :

ՄԱՐԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ Տին Եւնոր կտակարանի, 100 փր : ԳԵՂԵՑԻԿ ԶԲՈՍԱԿԱՆ, Տաճկաբոս աղցը կամ Վարժութիւն Հայ խոսակցութեան և շարագրութեան, Լ. տարի գին 100 փարս : Բ. տարի. Գին 3 զրէ :

ՄԱՆԿԱՎԱՐՃԱՐԺԱԿԱՆ, ԹՈՒԼԱՐԱՆՈՒԹԻՒՆ, պատկերազարդ, Մանկապարտէի-Ծագողի աղցը. Գին 3 զրէ :

ՄԱՐԿԱՎԱՐՁՈՒԹԻՒՆ, առողջապահական եւ բժշկական, արանց, կանանց եւ փոքր աղայոց, առանց գործիքի, Գին 4 զրէ :

ՀԱՅՏԻՔԻՆ ԼԵԶՈՒ կամ Վարժութիւն գրագրի, Ռաբրթ-ժըն դրութեամբ, Բ պետս Նախագիծարանաց. Գին 4 զրէ :



ՌՕՍԻԱ. — ROSSIA



ԱՊՐԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

ՀՐԴԵՅՔ, ԿԵԱՆՔ, ՓՈԽԱԴՐՈՒԹԻՒՆՔ, ԱՐԿԱԾՔ

1898 տարւոյ մէջ գանձուած ապահովագրին	34,775,642 ֆրանք
Երաշխաւորութեան գումար	121,765,333 »
1881էն ի վեր ապահովագրեալներուն պարուած	164,172,000 »

Կեդրոնացեղի, Բարափիկ վրայ, Մախաւան հին տեղը

Ընդհ. Բննիչ
Ա. ՀԻՒՐՄԻՆՁ

Ընդհ. Գործակալ
ԹԷՈՏՈՐ ՌԷՐԵՆ

Է Բ Ի Թ Ա Պ Լ

(ՄԻԱՅՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՅ)

ԱՇԽԱՐՀԻՍ ԱՄԵՆԷՆ ՀԱՐՈՒՍՏ ԵՒ ԱՄԵՆԷՆ ՀԶՈՐ

ԿԵԱՆՔԻ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ

ԵՐԱՇԽԱՎՈՐՈՒԹԵԱՆ ԴՐԱՄԱԳԼՈՒԻՒ **ՄԷԿ ՄԻԼԻԱՌ 451** ՄԻԼԻՈՆ ՅՐԱՆՔ



1898ին՝ Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. իր ապահովագրեալներուն բաժնած է աւելի քան **15³/₄** ՄԻԼԻՈՆ ֆրանք չահաքածին

[Այսինքն նոյն տարւոյ մէջ ֆրանսական ՄԻԱՅՅԱԼ 17 ընկերութեանց բաժնած չահաքու համագումարին գրեթէ կրկնը]:

Ախարհիս մէջ գանձուող ոչ մէկ ընկերութիւն

Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ գործառնութիւն ունի

Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ պահեստի դրամ ունի

Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ. չափ շահաբաժին կը վճարէ

Հետեւաբար ոչ մէկ ընկերութիւն կրնայ աւելի ԱԺԱՆ եւ աւելի ՇԱՀԱԻՏ ընծայել ԿԵԱՆ. քի ապահովագրութիւնը՝ որքան Է.Բ.Ի.Թ.Ա.Պ.Լ.

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՍԵՂԱՆԱՌՔ

ԼՈՆՏՈՆ

Բարիզ եւ Կ. Պոլիս, Գրետի Լիոնէ

Անգղիոյ պանքա

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՅԻՉ ԹՈՒՐԳԻՈՅ

ԳԱՌՆԻԿ ԱՍՏՈՒԱԾԱՏՈՒՐ

Կ. Պոլիս, Պաճէ Գաբու, Անանիասի Խան